

Արթուր Հարությունյան

ՀՀԱԱ կրթության և որակավորման հանձնաժողովի նախագահ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Սույն հոդվածում փորձ է արվում համեմատական վերլուծության ենթարկել ֆինանսական հաշվետվություններում պարունակվող տեղեկատվության որակական բնութագրերը և դրանց նկատմամբ հաշվապահական հաշվառումը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև ՀՀՄՄԿ «Հիմունքներով»¹ և ԱՄՆ ՖՀՄԽ² «Սկզբունքային դրույթներում»³ շարադրված պահանջները:

Ֆինանսական հաշվետվությունները ինքնանպատակ չեն: Դրանք կոչված են ներկայացնելու պատկերելու որոշակի տեղեկատվություն, իսկ թե ինչպիսի տեղեկատվություն, կախված է նրանից, թե **ու՞մ** է անհրաժեշտ այդ տեղեկատվությունը և **ինչի համար**: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ ֆինանսական հաշվետվությունների նպատակն է՝ կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին (ներկա և պոտենցիալ ներդրողներին, կառավարչական անձնակազմին և աշխատողներին, պետական մարմիններին, մատակարարներին և այլ կրեդիտորներին, փոխատուներին, հասարակությանը և ֆինանսական հաշվետվությունների այլ օգտագործողներին) անկողմնակալ տեղեկատվությամբ ապահովելը, որը նրանց անհրաժեշտ է տնտեսական որոշումներ կայացնելու համար: Ի լրումն, «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում» ՀՀՀՀՄ 1-ի 5-րդ պարագրաֆում նշվում է, որ ֆինանսական հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը օգնում է օգտագործողներին կանխատեսել կազմակերպության ապագա դրամական միջոցների հոսքերը, մասնավորապես, դրանց գումարները, ժամկետները և որոշակիությունը: Եվ դա բնական է, քանի որ ի վերջո գուտ դրամական ներհոսքեր ստեղծելու ունակությունից է կախված կազմակերպության՝ իր աշխատակիցներին և մատակարարներին վճարելու, վարկերը մարելու և շահաբաժիններ վճարելու կարողությունը: Եվ այդ ունակության ու կարողության վերաբերյալ արտաքին օգտագործողների դատողություններն էլ ազդում են նրանց կողմից կայացվող որոշումների վրա՝ լինի դա կազմակերպության հետ գնման-վաճառքի գործարքի, թե կազմակերպության արժեթղթերը գնել-վաճառելու կամ պահելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ ֆինանսական հաշվետվությունների նպատակը մոտավորապես նույն ձևով է նկարագրված ՀՀՄՄԿ «Հիմունքներում» և ԱՄՆ ՖՀՄԽ-ի սկզբունքային դրույթ թիվ 1-ում, միայն այն տարբերությամբ, որ վերջինում հատուկ շեշտվում է, որ ֆինանսական հաշվետվությունները պետք է օգտակար լինեն ներդրումային և վարկերի ստացման-մարման վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում:

¹ Խոսքը Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կոմիտեի կողմից ընդունված «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքների» մասին է:

² ԱՄՆ Ֆինանսական հաշվառման ստանդարտների խորհուրդ

³ Երբեմն թարգմանվում են նաև որպես սկզբունքների շարադրանքներ (անգլ. Concepts Statements)

Փաստորեն, ֆինանսական հաշվետվությունները տնտեսական որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությամբ են ապահովում օգտագործողների լայն խմբերի: Որպեսզի ֆինանսական հաշվետվությունները ծառայեն իրենց նպատակին, այսինքն՝ դրանցում պարունակվող տեղեկատվությունը իսկապես օգտակար լինի, այն պետք է ունենա որոշակի **որակական բնութագրեր**: Այլ կերպ ասած, որակական բնութագրերը այն հատկանիշներն են, որոնք տեղեկատվությունը դարձնում են օգտակար:

Քանի որ Օրենքում ուղղակիորեն սահմանված չեն որակական բնութագրեր, նախ դիտարկենք ՀՀՄՄԿ «Հիմունքներում սահմանվածները», այնուհետև՝ դրանք համեմատենք-գուգահեռենք օրենքում եղածների հետ: Ասենք միանգամից, որ այդ բնութագրերից շատերը օրենքում սահմանված են որպես հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքներ, իսկ մի մասն էլ դիտարկված են ՀՀՀՀՄ 1-ում՝ որպես ընդհանուր նկատառումներ:

ՀՀՄՄԿ «Հիմունքներում» սահմանված է չորս հիմնական որակական բնութագիր-հատկանիշ. տեղեկատվությունը պետք է լինի՝

1. հասկանալի,
2. տեղին,
3. արժանահավատ,
4. համադրելի:

ՀԱՄԿԱՆԱԼԻ ԼԻՆԵԼԸ

Հասկանալի լինելը Օրենքում սահմանված է որպես սկզբունք: Այն կախված է ինչպես օգտագործողից, այնպես էլ ներկայացվող տեղեկության բնույթից ու ոլորտից: Ենթադրվում է, որ օգտագործողները ֆինանսական հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը հասկանալու համար պետք է ունենան բավարար գիտելիքներ համապատասխան երևույթների և ոլորտների մասին, ինչպես նաև ուսումնասիրելու բավարար ցանկություն:

ՏԵՂԻՆ ԼԻՆԵԼԸ

Տեղին լինելու հատկանիշի մասին օրենքում խոսք չկա: Փոխարենը՝ այնտեղ սահմանված է էականության սկզբունք, համաձայն որի՝ տեղեկատվությունը էական է, եթե դրա չբացահայտումը կազմի կայացվող որոշումների վրա:

Ըստ ՀՀՄՄԿ «Հիմունքների»՝ որպեսզի տեղեկատվությունը լինի օգտակար, այն պետք է տեղին լինի օգտագործողների՝ որոշումների կայացման հետ կապված կարիքները բավարարելու առումով: Տեղեկատվությունը տեղին է, եթե այն ազդում է օգտագործողների տնտեսական որոշումների կայացման վրա՝ օգնելով նրանց՝

ա) գնահատել անցյալ, ներկա և ապագա դեպքերը (*տեղեկատվության կանխատեսական նշանակություն*).

բ) հաստատել կամ ճշգրտել այդ դեպքերի վերաբերյալ իրենց նախորդ գնահատականները (*տեղեկատվության հաստատողական նշանակություն*):

Տեղեկատվության կանխատեսող և հաստատող դերերը փոխկապակցված են: Անցյալ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքի և ներկա ֆինանսական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ որպես հիմք է ընդունվում ապագա ֆինանսական արդյունքը, ֆինանսական վիճակը և օգտագործողներին անմիջականորեն հետաքրքրող այլ ֆինանսական ցուցանիշներ կանխատեսելու համար: Կանխատեսող նշանակություն ունենալու համար պարտադիր չէ որ տեղեկատվությունը լինի բացահայտ կանխատեսման ձևով: Սակայն անցյալ դեպքերի և գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու ձևը կարևոր է և կարող է էականորեն բարելավել ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կանխատեսումներ կատարելու հնարավորությունը:

ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԷԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկատվության տեղին լինելը կախված է ինչպես դրա **բնույթից**, այնպես էլ **էականությունից**: Օրինակ՝ կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում նոր սեզմենտի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը կարող է տեղին լինել կազմակերպության ռիսկերն ու հնարավորությունները գնահատելու առումով՝ անկախ այդ նոր սեզմենտի հաշվետու

Ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների էականությունից: Էականությունը կախված է կոնկրետ հանգամանքներում քննարկվող հոդվածի կամ թույլ տված սխալի չափից: Եվ որպես այդպիսին էականությունը ավելի շուտ համարվում է սահմանային որակ (շեմ), քան թե այնպիսի առաջնային որակական հատկանիշ, որով, օգտակար լինելու համար, անհրաժեշտաբար պիտի օժտված լինի տեղեկատվությունը:

ԺԱՄԱՆԱԿԻՆ ԼԻՆԵԼԸ

Տեղեկատվության տեղին լինելը կախված է նաև ***ժամանակին լինելուց***: Այսինքն՝ տեղեկատվությունը պետք է հասնի օգտագործողներին, քանի դեռ այն չի կորցրել կայացվելիք որոշումների վրա ազդելու կարողությունը: Տեղեկատվության ժամանակին լինելը դեռևս չի նշանակում, որ այն միաժամանակ նաև տեղին կլինի, մինչդեռ ժամանակին չներկայացված տեղեկատվությունը չի կարող տեղին լինել: Նկատենք, սակայն, որ չնայած տեղեկատվության տեղին լինելու հատկանիշի վրա ազդում է ժամանակին լինելը, վերջինս ինքնին ոչ այնքան բուն տեղեկատվությանը վերաբերող որակական հատկանիշ է, որքան այդ տեղեկատվության ներկայացմանը վերաբերող պահանջ-սահմանափակում:

ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Օգտակար տեղեկատվության պարտադիր հատկանիշներից պիտի լինի նաև արժանահավատությունը: Թեկուզև շատ տեղին, բայց ոչ արժանահավատ տեղեկատվության ներկայացումը կարող է ապակողմնորոշիչ լինել: Տեղեկատվությունը համարվում է արժանահավատ, եթե այն զերծ է էական սխալներից և կանխակալություններից և որի վրա օգտագործողները կարող են հույս դնել այն առումով, որ դա իրականում ***ճշմարտորեն ներկայացնում է*** այն, ինչ ենթադրվում է, որ պիտի ներկայացնի, ինչ հավակնում է և կոչված է ներկայացնել կամ այն, ինչ խելամտորեն կարելի է ակնկալել, որ պիտի ներկայացնի:

Ճշմարիտ ներկայացում

Ճշմարիտ ներկայացման վերաբերյալ վերը բերված բնորոշումից հետևում է, որ ճշմարիտ ներկայացման հասնելը այնքան էլ հեշտ չէ: Բանն այն է, որ տվյալ դեպքում տեղեկատվությունը հանդիսանում է միջոց, որով փաստացի դեպքերը, երևույթները ու դրանց արդյունքները հասցվում են օգտագործողներին (օգտագործողների գիտակցությանը): Հետևաբար՝ ճշմարիտ ներկայացումը մի կողմից կախված է նրանից, թե այդ փաստացի դեպքերը, երևույթներն ու դրանց արդյունքները ինչպես են մեկնաբանվում, բնութագրվում, պատկերվում ու ներկայացվում որպես տեղեկատվություն, իսկ մյուս կողմից դա կախված է նաև նրանից, թե այդ բնութագրված, պատկերված ու ներկայացվածը ինչպես է ընկալվում օգտագործողների կողմից:

Իրավական ձևի նկատմամբ տնտեսական բովանդակության գերակայությունը

Որպեսզի տեղեկատվությունը ճշմարտորեն ներկայացնի այն գործարքներն ու դեպքերը, որոնք հավակնում է ներկայացնել, անհրաժեշտ է, որ դրանք հաշվառվեն և ներկայացվեն իրենց բովանդակության և տնտեսական իրողություններին համապատասխան, այլ ոչ թե պարզապես իրավական ձևի հիման վրա: Ոչ միշտ է, որ գործարքների տնտեսական բովանդակությունը համապատասխանում է նրան, ինչ ակնհայտ է թվում դրանց իրավական ձևից: Նման դեպքերում պետք է ընդունել, որ ***տնտեսական բովանդակությունը գերակայում է իրավական ձևի նկատմամբ***:

Չեզոքությունը

Արժանահավատության անհրաժեշտ պայման է նաև ***չեզոքությունը***, այն է՝ կանխակալություններից զերծ լինելը: Տեղեկատվությունը չի կարող համարվել չեզոք, եթե դա ընտրվում, պատրաստվում և ներկայացվում է այնպիսի ձևով, որ այդ տեղեկատվության հիման վրա դատողություններ անելով կայացվող որոշումը կհանգեցնի (տեղեկատվությունը պատրաստողի համար) կանխորոշելի արդյունքի:

Հաշվենկատությունը

Տեղեկատվության արժանահավատ լինելու համար անհրաժեշտ է նաև, որ այն պատրաստված լինի ***հաշվենկատորեն***: Հաշվենկատությունը վերաբերում է անորոշության պայմաններում դատողություններ անելիս բավարար չափով զգուշավորության ցուցաբերմանը՝ այնպես, որ

ակտիվներն ու եկամուտները չլինեն գերազնահատված, իսկ պարտավորություններն ու ծախսերը՝ թերազնահատված: Բհարկե, հաշվենկատությունը չի նշանակում, որ կարելի է միտումնավոր թերազնահատել ակտիվներն ու եկամուտները և միտումնավոր գերազնահատել ծախսերն ու պարտավորությունները, քանի որ նման ձևով պատրաստված տեղեկատվությունը արդեն իսկ չեզոք չէ և չի կարող լինել արժանահավատ: Այլ կերպ ասած՝ հաշվենկատությունը ենթադրում է, որ ակտիվների և եկամուտների համար հնարավոր մի քանի արժեքներից պետք է ընտրել փոքրագույնը, իսկ պարտավորությունների և ծախսերի համար՝ ամենամեծը: Դա նաև կարող է նշանակել, որ ծախսերը պետք է ճանաչվեն հնարավորինս շուտ, իսկ եկամուտները՝ հնարավորինս ուշ: Այսպիսով՝ հաշվենկատությունը հանգեցնում է ավելի շուտ հոռետեսական, քան թե լավատեսական գնահատականների: Հաշվապահական հաշվենկատությունը (հոռետեսությունը) կոչված է մասամբ չեզոքացնելու տնօրենների և սեփականատերերի (ձեռնարկատերերի) գերլավատեսությունը:

Ամբողջականությունը

Արժանահավատ լինելու համար տեղեկատվությունը նաև ամբողջական պիտի լինի՝ էականության սահմաններում, հաշվի առնելով նաև դրա ապահովման ծախսումները: Ոչ ամբողջական տեղեկատվությունը ապակողմնորոշիչ և սխալ կարող է լինել, և հետևաբար, ոչ արժանահավատ:

ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական հաշվետվությունների օգտակարությունը էապես մեծանում է, եթե դրանք օգտագործողներին թույլ են տալիս ժամանակի ընթացքում համեմատություններ կատարելով որոշել զարգացումների միտումները՝ կապված կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքի հետ: Բացի այդ, օգտագործողները պետք է ի վիճակի լինեն համեմատել տարբեր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները՝ դրանց ֆինանսական արդյունքը, ֆինանսական վիճակը և վերջինիս փոփոխությունները հարաբերականորեն գնահատելու համար: Այդ պատճառով էլ միանման դեպքերի և գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը, տարբեր կազմակերպությունների կողմից և տարբեր ժամանակաշրջանների համար, պետք է պատրաստվի և ներկայացվի **հետևողական ձևով**: Համադրելիություն ապահովելու համար անհրաժեշտ է, որ օգտագործողները իրազեկված լինեն ֆինանսական տեղեկատվությունը պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության, ինչպես նաև այդ քաղաքականության փոփոխությունների և այդ փոփոխությունների հետևանքների վերաբերյալ:

Համադրելիության անհրաժեշտությունը չպետք է շփոթել և նույնացնել բոլոր կազմակերպությունների համար ֆինանսական հաշվետվությունների միասնական պարտադիր ձևերի և անայլընտրանք հաշվապահական հաշվառման քաղաքականության անհրաժեշտության, ինչպես նաև դրանց փոփոխության անթույլատրելիության հետ (չնայած այդ պայմաններում համադրելիությունը կհասներ առավելագույնի):

Օգտագործողներին միջժամանակաշրջանային համեմատություններ կատարելու հնարավորություն ընձեռելու համար անհրաժեշտ է, որ ֆինանսական հաշվետվություններում ներառված լինի նախորդ ժամանակաշրջանների համապատասխան (համադրելի) տեղեկատվությունը:

ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ


Դժվար չէ նկատել, որ չնայած վերը քննարկված որակական բնութագրերը միասնաբար կոչված են ծառայելու մեկ նպատակի (տեղեկատվությունը որոշումների կայացման համար օգտակար դարձնելուն), դրանց միջև կան որոշակի հակասություն-սահմանափակումներ: Այսպես, օրինակ, տեղեկատվության ճշտությունը և արժանահավատությունը ապահովելու համար հաճախ կարող է պահանջվել որոշակի ժամանակ, մինչև որ հայտնի կդառնան խնդրո առարկա գործարքի կամ դեպքի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ հանգամանքները: Մինչդեռ այդ ընթացքում, արդեն միանգամայն արժանահավատ տեղեկատվությունը, կարող է այլևս տեղին չլինել որոշումների կայացման համար՝ ուշացման պատճառով: Այսինքն՝ շատ դեպքերում գոյություն ունի հակադարձ համեմատական կախվածություն արժանահավատության և տեղին (ժամանակին) լինելու միջև: Մյուս կողմից էլ արժանահավատ տեղեկատվություն ստանալու համար կարող է պահանջվել ոչ միայն շատ

Ժամանակ, այլև շատ ռեսուրսներ (ծախսումներ): Նման դեպքերում իմաստ ունի ապահովել այդ տեղեկատվությունը, եթե դրա օգտակարությունը գերազանցելու է դրա ստացման ծախսումները: Պետք է նաև նկատել, որ գործնականում տեղեկատվության օգտակարության և դրա համար անհրաժեշտ ծախսումների հարաբերակցումը շատ դժվար, եթե ոչ անհնարին, կարող է լինել, մանավանդ, որ հաճախ տեղեկատվությունը պատրաստողը կամ ծախսումները կատարողը և տեղեկատվությունից օգտվողները կարող են չհամընկնել:

Մատնանշելով որակական բնութագրերի հետ կապված այս սահմանափակումները, այնուամենայնիվ, ՀՀՄՄԿ «Հիմունքներում» դրանցից ոչ մեկին հստակ գերակայություն չի տրվում, փոխարենը նշվում է, որ որակական բնութագրերի հարաբերական կարևորությունը պետք է գնահատվի կոնկրետ հանգամանքներում, և դրանց միջև պետք է ապահովվի խելամիտ հավասարակշռություն:

Մի քիչ այլ է որակական բնութագրերի ներկայացումը ԱՄՆ ՖՀՄԽ-ի սկզբունքային դրույթ թիվ 2-ում, որտեղ սահմանված է որակական բնութագրերի հիերարխիա: Այն ներկայացվում է հետևյալ գծապատկերում:

**Գծապատկեր. Ֆինանսական հաշվետվությունների որակական բնութագրերը՝
ըստ ԱՄՆ ՖՀՄԽ Սկզբունքային դրույթների:**



ԱՄՓՈՓՈՒՄ

Որպես համառոտ ամփոփում, համեմատելով ֆինանսական հաշվետվություններում պարունակվող տեղեկատվության որակական բնութագրերին ներկայացվող՝ հայաստանյան, ամերիկյան և միջազգային պահանջները, կարելի է նշել հետևյալը:

Հասկանալիությունը Օրենքում նշված է որպես սկզբունք, ՀՀՄՄԿ «Հիմունքներում»՝ որպես հիմնական որակական բնութագիր, իսկ ԱՄՆ ՖՀՄԽ սկզբունքային 2-րդ դրույթում՝ որպես բնութագիր, որը պայմանավորված է օգտագործողների առանձնահատկություններով (նույն տեղեկատվությունը կարող է հասկանալի լինել մի օգտագործողի համար, իսկ մյուսի համար՝ ոչ): Դա նաև կախված կարող է լինել տեղեկատվության բնույթից:

Տեղին լինելը ևս ՀՀՄՄԿ «Հիմունքներում» նշված է որպես հիմնական որակական բնութագիր, ԱՄՆ ՖՀՄԽ սկզբունքային 2-րդ դրույթում՝ որպես հիմնական բնութագիր, որը կայացված է կայացվելիք որոշումների առանձնահատկություններից: Ինչպես արդեն նշել ենք վերը, Օրենքում, տեղին լինելու մասին խոսք չկա, և մոտավորապես դրան նման է օրենքում սահմանված, էականության սկզբունքը:

Արժանահավատությունը լայնորեն քննարկված է ինչպես ՀՀՄՄԿ «Հիմունքներում» այնպես էլ ԱՄՆ ՖՀՄԽ սկզբունքային 2-րդ դրույթում, անդրադառնալով այն ասպեկտներին, որոնք տեղեկատվությունը դարձնում են արժանահավատ: Այդ երկուսում էլ նշված են, «Ճշմարիտ ներկայացման» անհրաժեշտությունը, չեզոքությունը: Սկզբունքային 2-րդ դրույթում կարևորություն է տրվում տեղեկատվության, «ստուգելիությանը» (դա տեղի ունի, երբ մի շարք տարբեր փորձագետների գնահատականները տալիս են մոտավորապես նույն արդյունքը): Ե վ հիմունքներում, և Օրենքում խոսվում է «ձևի նկատմամբ բովանդակության գերակայության» և «ամբողջականության» մասին:

Համադրելիությունը պահանջված է և Օրենքում, և Հիմունքներում, և Սկզբունքային 2-րդ դրույթում:

Պետք է նշել, որ Օրենքում այս բոլորը ներկայացված են որպես հաշվապահական հաշվառում վարելու և ֆինասական հաշվետվություններ կազմելու սկզբունքներ, այլ ոչ թե որպես որակական բնութագրեր: Ինչ վերաբերում է Օրենքով սահմանված անընդհատության և հաշվեգրման սկզբունքներին, ապա դրանք հատկապես կարևորված չեն ԱՄՆ ՖՀՄԽ սկզբունքային դրույթներում, իսկ «Հիմունքներում» դրանք ներկայացված են որպես հիմնադրույթային ենթադրություններ: